Գ. (3) զարբաֆ[7] սաղաւարա, մէկ մարմար աւազան, Ա. (1) աթոռ, Սիղուտու ճանապարհին Կրկըշարտու պատառներն։ Այլև մահդասի խօճայ Մարգարէն Ա. (1) քարվանսարայ[8] շինեաց իւր օտայներովն[9]. ինչ որ օտաներուն գալուր[10] լինի, ի վերայ քարվանսարին պակասութեանն խարճեն[11], որ հանապազ չէն մնայ։

Աստուած ողորմի ասացէք մահդասի խօճայ Սահակին և իւր եղբայր խօճայ Զաքարիային, և իւրեանց կողակցացն՝ Մարիամանց, և իւրեանց ծնօղացն՝ մահդասի խօճայ || (6բ) Մարգարէին և Նազլուխանին, պապուն իւրեանց՝ մահդասի Հայրապետին, և մամուն՝ Յուստիանին, հօրաքեռցն Խոնձուն և ///ին, և ///կամին, և Մարգարտին, և այլ ամենայն առուարեան մերձաւորացն՝ կենդանեացն և առ Քրիստոս ննջեցելեացն, որ գօլին[12] հիմանէն մինչև ի Խաչի յիշատակարանն Ը. (8) գազ[13] սկիզբն արարին հաստահիմն և կոփուածու վիմօք, գեղեցիկ բրշերօք[14] և ամրախիճ կրօք շինեցին, և գահրիզի[15] առաջի ձորի բանտն[16], որ գահրիզի ջուրն անց են կացուցել, անտի մինչև ի դուռն սբ. եկեղեցւոյս Գ. (3) տեղի ղըրխայազ[17] է շինած, մէկն՝ Աստուածածնի դռանն, մէկն՝ քարուանսարի մօտն և մէկն՝ եկեղեցւոյ դրանն։ Այսչափ վարձք և աշխատանք յիւրեանց հալալ և արդար վաստակոցն կատարեցին՝ մե||(7ա)ծաւ ծախիւք և բաղում նեղութեամբ վասն սիրոյն Քրիստոսի և յուսոյ արքայութեանն։ Այսուհետև ի մերոց ազգականաց կամ յօտարաց, ով ոք յայտնի կամ ի ծածուկ ջուր բաժանէ և տանի յայլ տեղիս հանցէ, նա յանմահական ջրոյն ծարաւ մնասցէ, յերեք հարիւր ԺԸ Ը (318) հայրապետացն նզովեալ և անիծեալ եղիցի, մասն և բաժին ի Կայենէ և ի Յուդայէ ընկալցին մեր մեղացն պարտական լիցին և տեսեալս առ մեզ գայցեն։ Այլ միայն յայս Գ. (3) տեղիս հաստատուն և անշարժ մնասցէ մինչև յաւիտեան։ Խնդրեմք ի ձէնջ, որ մեր հոգւոցն Աստուած ողորմի ասէք ամենեքեան. ողորմածն Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի աստ և ի միւսանգամ գալստեան իւրում, և ինքն օրհնեալ եղիցի այժմ և անզրաւ յաւիտենիս յաւիտեանս. ամէն։

7բ. Դարձեալ սկիզբն գօլին, որ հիմն եղաք՝ թիւն ՌՃԺԲ (1663) էր, և յորժամ կատարումն եղև, թէ գօլին և թէ աղբիւրին, թուականն էր ՌՃԻ (1671)-ումն. Ը. (8) տարումն աւարտեցաւ մեծաւ աշխատութեամբ։

---

7 պրսկ. زرباف — ոսկերանվածք։

8 պրսկ. کاروانسرا — կարավանատուն, իջևան։

9 Թրք. اوطه — սենյակ։

10 Թրք. گلور — եկամուտ։

11 արաբ. خرج-ից — ծախսեն։

12 Թրք. گول — ջրավազան

13 պրսկ. گز — երկարության չափ, 0,90—1,10 մետր։

14 պրսկ. برج — աշտարակ։

15 պրսկ. کهریز — ստորերկրյա ջրերը օգտագործելու նպատակով փորված ջրանցք։

16 պրսկ. بند — ամբարտակ, պատնեշ։

17 Թրք. قرق آیاق — դեպի ստորերկրյա ջրանցքը տանող սանդուղքներ, որ բառացի նշանակում է «քառասուն ոտք» կամ «քառասուն սանդուղք»։